ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

ՀԱՎԵԼՎԱԾ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

Ակտի համարը և անվանումը՝	***№ 279, Ազդարարների և վկաների պաշտպանության ընթացակարգ***
Ընդունող մարմինը՝	***Տնօրինություն***
Ընդունման ամսաթիվը և հիմքը՝	***11.12.2024թ. թիվ 74- Լ որոշում***
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝	***11.12.2024թ.***
Խմբագրության հերթական համարը՝	***1.0***
Կիրառող ստորաբաժանում(ներ)ը՝	***Բոլորը***
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը՝	***Իրավաբանական բաժին***
Հրապարակայնությունը՝	☒ ***հրապարակվող*** ☐ ***սահմանափակ*** ☐ ***գաղտնի***

I.Ներածություն

1.1 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ճանաչում է ազդարարների առանցքային դերը արգելված գործելակերպի և այլ անօրինական գործողությունների բացահայտման գործում՝ հնարավորություն տալով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին արդյունավետ կերպով կանխել, հայտնաբերել և մեղմել նման չարաշահումները և պաշտպանել իրեն վստահված ռեսուրսները: Ազդարարները կարևոր դեր են խաղում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի առաքելությանը նպաստելու գործում: Ազդարարներին պաշտպանելով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն պաշտպանում է իր ֆինանսական, գործառնական և հեղինակության ամբողջականությունը՝ նպաստելով իր մանդատի իրականացման համար կարևոր քայլերի:

1.2 Ազդարարների և վկաների պաշտպանության ընթացակարգը («Ընթացակարգ») «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կոռուպցիայի և խարդախության հանդեպ զրո հանդուրժողականության դրսևորումն է և նպատակ ունի ապահովել խարդախությունների և ամբողջականության խախտումների բացահայտման հստակ ուղիներ: Դրանով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն կկարողանա արդյունավետ կանխել և հայտնաբերել նման չարաշահումները՝ պաշտպանելով իրեն վստահված ռեսուրսները և ապահովելով, որ դրանք օգտագործվեն արդյունավետ և նպատակային:

II.Նպատակը

2.1 Սույն ընթացակարգի նպատակն է հնարավորություն տրամադրել ցանկացած անձի, ում նկատմամբ կիրառվում են դրա դրույթները, բարեխղճորեն և առանց վրեժխնդրության վախի հայտնել Հանցագործության կասկածների մասին, որպեսզի ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ն կարողանա արդյունավետորեն պաշտպանել իր շահերը, ռեսուրսները և առաքելությունը՝ բացահայտելով և նվազագույնի հասցնելով ֆինանսական և հեղինակության ռիսկերը հնարավորինս վաղ փուլերում:

III.Սահմանումներ

3.1 Սույն ընթացակարգի նպատակներից ելնելով՝ կիրառվում են հետևյալ սահմանումները.

ա) **Տնօրինություն** - «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Տնօրինությունը:

բ) **Շահերի բախում՝** ցանկացած իրավիճակ, երբ կողմը կամ նրա անձնակազմը, ներգրավված լինելով համապատասխան որոշումների ընդունման գործընթացում, ունի շահեր, որոնք կարող են կա՛մ ընկալվել որպես ազդեցություն պաշտոնական պարտականությունների, պայմանագրային պարտավորությունների վրա, կա՛մ օրենսդրական կարգավորումների կատարման վրա:

գ) **կատարող կազմակերպություն և ենթակապալառու** - ցանկացած կողմ, որը նպաստում,

իրականացնում, մասնակցում, հայտ է ներկայացնում կամ որևէ կերպ մասնակցում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին առնչվող գործողություններին, այդ թվում՝ ստանում է դրամաշնորհ (սուբդրամաշնորհի միջոցով) կամ այլ ֆինանսավորում կամ աջակցություն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ից:

դ) **Պաշտպանված Անձինք** - նշանակում է ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ում ցանկացած մակարդակում կամ պաշտոնում աշխատող անձինք, ներառյալ (բայց չսահմանափակվելով) ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ի տնօրենները, ղեկավարությունը և անձնակազմը, ինչպես նաև ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ի հետ պայմանագրով աշխատող այլ անձինք:

ե) **Ապացույց**՝ ցանկացած ֆիզիկական առարկա, փաստաթուղթ, վկայություն կամ այլ տեղեկատվություն, որը հաստատում է տվյալ մեղադրանքը կամ փաստը:

զ) **Արտաքին կողմ**՝ նշանակում է ցանկացած անձ կամ կազմակերպություն՝ բացառությամբ Պաշտմանված անձանց, որը նպաստում, մասնակցում և առնչվում է ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ին առնչվող որևէ գործողության հետ: Արտաքին Կողմը կարող է լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձ և կարող է ներառել կատարող կազմակերպություններ և ենթակապալառուներ:

է) **Արտաքին ազդարարներ** և վկաներ՝ Արտաքին Կողմեր են, որոնք սույն Ընթացակարգի սահմանումների շրջանակում, հանդես են գալիս որպես Ազդարարներ և վկաներ:

ը) **Կեղծ կամ չարամիտ հաղորդում**՝ նշանակում է ոչ ճշգրիտ կամ մոլորեցնող հաղորդում, որը ներկայացվում է անփութորեն, կամ միտումնավոր և գիտակցաբար՝ անհարկի առավելություն ստանալու կամ անձին կամ կազմակերպությանը կամ վնաս պատճառելու նպատակով:

թ) **Բանկի առնչվող գործունեություն**՝ ցանկացած գործողություն, որը ֆինանսավորվում, կառավարվում կամ աջակցություն է ստանում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից՝ իր կամ այլոց ռեսուրսներով, կամ ցանկացած գործունեություն, որը կարող է նյութական ազդեցություն ունենալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի վրա:

ժ) **Բանկի անձնակազմ**՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բոլոր աշխատակիցները կամ այլ անձինք, որոնք պայմանագրային հարաբերությունների մեջ են և/կամ ներգրավմամբ աշխատում են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի համար:

ժա) **Մարդկային ռեսուրսների իրավական շրջանակ**՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի աշխատակազմի գործունեությունը կարգավորող կամ հրահանգող բոլոր քաղաքականությունները, հրահանգները, ընթացակարգերը և ուղեցույցները:

ժբ) **Արգելված գործելակերպ**՝ հատուկ վարքագիծ, որը սահմանվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի համապատասխան սկզբունքներում և քաղաքականություններում, ներառյալ՝ Կոռուպցիոն Գործողությունները, Խարդախ Գործողություններ, Հարկադրանքները, Դավադիր Գործողություններ, Խոչընդոտող Գործողություններ, Չարաշահումները, Ազդարարների Նկատմամբ Վրեժխնդրությունը, Փողերի Լվացումը և Ահաբեկչական Ֆինանսավորումը:

ժգ) **Վրեժխնդրություն ազդարարների կամ վկաների նկատմամբ**՝ որևէ վնասակար

գործողություն(ուղղակի կամ անուղղակի), որն առաջարկվում, սպառնում կամ իրականացվում է Ազդարարների կամ Վկաների կամ ազդարարին կամ վկային առնչվող անձի նկատմամբ՝ իր հաղորդման կամ համագործակցության համար:
ժդ) **Հետաքննության Օբյեկտ՝** անձ, որը կասկածվում է Համապատասխանության ստորաբաժանման (ՀՍ) կողմից ուղղակիորեն կամ լիազորված ներկայացուցչի միջոցով հետաքննվող սխալ արարքին օժանդակելու կամ ներգրավված լինելու մեջ:
ժե) **Անձնակազմ՝** բոլոր անձինք, որոնք պաշտոնի են նշանակված «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում՝ նշանակման վերաբերյալ հրամանի հիման վրա (անհատապես՝ «Անձնակազմի Անդամ»):
ժզ) **Ազդարար՝** ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը բարեխղճորեն և ողջամիտ հիմքերով հաղորդում է, փորձում է հաղորդել, կամ համարվում է, որ հաղորդել է կասկածելի անօրինական արարքի(ներառյալ անօրինական արարքի մասին կասկածը) մասին:
ժէ) **Սխալ արարք՝** վարքագիծ, որը խախտում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի քաղաքականությունները կամ որի հետևանքով առաջանում են զգալի ռիսկեր բանկի շահերի, հեղինակության, գործառնությունների կամ կառավարման համար:
ժը) **Վկա՝** ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը բարեխղճորեն համագործակցում է, կամ համարվում է, որ պատրաստվում է համագործակցել, կամ համարվում է, որ համագործակցել է հետաքննության հետ և տրամադրել տեղեկատվություն կամ ապացույցներ:
ժթ) **Համապատասխանություն՝** վերաբերում է Բանկի Ռիսկերի կառավարման և Համապատասխանության բաժնի ներքո գործող կազմակերպչական և գործառնական կառուցվածքին, որը պատասխանատու է ապահովելու, որ կազմակերպությունը հետևի կիրառվող օրենքներին, կանոնակարգերին, չափանիշներին և ներքին քաղաքականություններին: Դրա հիմնական դերը համապատասխանության ռիսկերի հայտնաբերումը, գնահատումն ու նվազեցումն է՝ կազմակերպության ամբողջականությունը, հեղինակությունը և գործառնական շարունակականությունը պաշտպանելու նպատակով:

IV. Շրջանակ և կիրառելիություն

4.1 Այս ընթացակարգը կիրառելի է Ազդարարների համար, որոնք, սույն ընթացակարգի շրջանակում, հաղորդում են կասկածելի Սխալ արարքի մասին: Համապատասխանության ստորաբաժանման (ՀՍ) իրավասության մեջ մտնող կասկածելի Սխալ արարքի վերաբերյալ հաղորդումները կդիտարկվեն Համապատասխանության ստորաբաժանման (ՀՍ) կողմից: Այլ հաղորդումները, բողոքները կամ դժգոհությունները, որոնք դուրս են այս շրջանակից, կուղարկվեն կամ կդիտարկվեն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի համապատասխան ստորաբաժանումների կամ այլ լիազորված մարմինների կողմից: Բարդ հաղորդումները, որոնք ընդգրկում են մի քանի խնդիրներ, կարող են դիատրվել մեկից ավելի ստորաբաժանումների կամ մարմինների կողմից:

4.2 Ազդարարներ կարող են ներառել այն անձանց, որոնք ՀՍ-ը ներկայացնում են բողոքներ, դժգոհություններ կամ վերանայման խնդրանքներ/հայտեր, որոնք կարող են համարվել Սխալ արարք:
4.3 Ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը ներկայացնում է Կեղծ կամ Չարամիտ Հաղորդում, չի պաշտպանվում այս ընցակարգով և կարող է ենթարկվել համապատասխան պատժամիջոցների կամ կարգապահական միջոցների՝ համաձայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի քաղաքականությունների և ուղեցույցների, ինչպես նաև պայմանագրային համաձայնությունների դրույթների:

V. Ընդհանուր սկզբունքներ
5.1 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն չի հանդուրժում Ազդարարների նկատմամբ վրեժխնդրությունը: Վրեժխնդրությունը Ազդարարի նկատմամբ համարվում է **Արգելված գործելակերպ**:
5.2 Ցանկացած անձ կարող է առանց խոչընդոտների ՀՍ-ն հաղորդել իր ուշադրության տակ հայտնված կասկածելի Սխալ արարքի մասին և համագործակցել ՀՍ-ի հետ՝ հետաքննության, ակտիվ աուդիտի կամ այլ հարցումների շրջանակներում՝ չվախենալով վրեժխնդրությունից:
5.3 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, այդ թվում ՀՍ-ը, բանկի իրավասության շրջանակում, ձեռնարկում է բոլոր հասանելի միջոցները՝ պաշտպանելու այն Ազդարարներին, որոնք բարեխղճորեն ներկայացրել են հաղորդում կամ համագործակցել են հետաքննության հետ՝ հիմնվելով այն համոզմունքի վրա, որ իրենց հաղորդումը, տեղեկությունը կամ ապացույցները ճիշտ են:
5.4 Ցանկացած անձ կարող է անանուն կերպով հաղորդել կասկածելի Սխալ Արարքի մասին կամ տրամադրել ապացույցներ կամ տեղեկատվություն հետաքննության համար:
5.5 9.4. և 9.5 դրույթների համաձայն՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն գաղտնի է պահում ազդարարների և վկաների, ինչպես նաև նրանց մերձավոր ընտանիքի անդամների և համախոհների ինքնությունը (եթե նրանք դա են պահանջում): Հաղորդագրության հեղինակի կամ նրա ընտանիքի անդամների և մերձավորների ինքնությունը գաղտնի կմնա (եթե այդպես պահանջվի), բացառությամբ այն դեպքերի, երբ հետաքննության արդյունքները դա անհնարին են դարձնում:
5.6 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն կձեռնարկի ողջամիտ միջոցներ՝ ապահովելու այն անձանց հիմնական իրավունքները, որոնք ներառված են Սխալ արարքի մասին հաղորդումներում:
5.7 Սխալ անելու կասկածի մասին հաղորդումը ոչ մի կերպ չի պաշտպանում ազդարարին կամ վկային իրենց սեփական Սխալ արարքից բխող պատժամիջոցներից: Այլ կերպ ասած, ազդարարումը «արտակարգ ելք» չէ ապօրինի արարքի մեղսակցության համար: Այնուամենայնիվ, կախված հանգամանքներից, համապատասխան պատժամիջոցը կամ

պաշտպանության այլ միջոցը որոշելիս, պետք է հաշվի առնվեն նրանց հաղորդումը և համագործակցության աստիճանը:
5.8 Բոլոր պաշտպանված անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ որևէ անօրինական գործողությունների մասնակցելուց:

VI. Կասկածելի Սխալ արարքի մասին հաղորդում և հետաքննություն

6.1 Ցանկացած անձ կամ կազմակերպություն կարող է ՀՍ-ը հաղորդել կասկածելի Սխալ արարքի մասին, ինչպես սահմանված է այս ընթացակարգով:
Կասկածելի խախտումների մասին տեղեկություններ ունեցող անձանց, հատկապես, երբ դրանք վերաբերում են պաշտպանված անձանց, ինչպես նաև «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ կապված գործունեություն իրականացնող կազմակերպություններին և ենթակապալառուներին, խստորեն խրախուսվում է նման տեղեկատվությունը հաղորդել Իրավաբանական բաժնին:
6.2 Պաշտպանված անձիք պարտավոր են հնարավորինս շուտ հայտնել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին առնչվող որևէ Գործողության հետ կապված կասկածելի Սխալ արաքի մասին: Բանկի աշխատակիցները կասկածելի խախտումները հաղորդելու համար որևէ հաստատման, թույլտվության կամ համաձայնության անհրաժեշտություն չեն ունենա:
6.3 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ցանկացած ղեկավար, կառավարիչ կամ այլ անձ, որը ստանում է ենթադրյալ Սխալ արարքի մասին հաղորդում, որը կազմվել է բարեխղճորեն, պարտավոր է անհապաղ փոխանցել հաշվետվությունը ՀՍ-ը:
6.4 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Արգելված գործելակերպի մասին ընթացակարգի և դրան վերաբերող ցանկացած ընթացակարգի համաձայն՝ Կատարող կազմակերպությունները և ենթակապալառուները պարտավոր են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին անհապաղ տեղեկացնել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին Գործունեությանն առնչվող կասկածելի արգելված գործելակերպի վերաբերյալ հայտնաբերված կամ ենթադրյալ հաղորդումների մասին: Այս պարտավորությունը կարգավորվում է Բանկի հետ գործող իրավական պայմանագրերի պայմաններով:
6.5 Բացառությամբ 6.6 կետում նկարագրված դեպքերի՝ 6.1-6.4 կետերում նշված հաղորդումները և տեղեկատվությունը պետք է ուղարկվեն Համապատասխանության ստորաբաժանում (ՀՍ)՝ օգտագործելով հետևյալ կապի միջոցները.

- Էլեկտրոնային հասցե: integrity@armswissbank.am
- Թեժ գիծ: +374 60 757 000
- Փոստային հասցե: Վազգեն Սարգսյան 10, 0010, Երևան, ՀՀ

6.6 Եթե կասկածելի Սխալ արարքի մասին հաղորդումը վերաբերում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի անձնակազմին կամ նրանց անմիջական ընտանիքի անդամներին, այդ հաղորդումը պետք է ուղարկվի Համապատասխանության ստորաբաժանման ղեկավարին: Եթե հաղորդումը

վերաբերում է ՀՍ ղեկավարի ենթակայության տակ աշխատող անձնակազմին, այն ևս կարող է ուղարկվել ՀՍ-ի ղեկավարին:
6.7 Կասկածելի Սխալ արարքի մասին հաղորդում ուղարկողները պետք է գործեն բարեխղճությամբ և, հնարավորության դեպքում, տրամադրեն տեղեկություններ կամ ապացույցներ, որոնք հիմնավորում են, որ Սխալ արարքը տեղի է ունեցել:
6.8 Հետաքննության հաջողության համար հաղորդումները պետք է լինեն հնարավորինս կոնկրետ: Դրանք պետք է ներառեն հետևյալ մանրամասները.

ա) Կասկածելի Սխալ արարքի տեսակը,

բ) Ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ ձևով է տեղի ունեցել կասկածելի Սխալ Արարքը,

գ) Ովքեր են ներգրավված եղել և հնարավոր է տեղեկացված լինեն հաղորդված խնդիրների մասին:

6.9 Հաղորդագրության հետ պետք է կցվեն համապատասխան փաստաթղթեր կամ այլ ապացույցներ, կամ դրանք պետք է ներկայացվեն հնարավորինս արագ: Սակայն որևէ մանրամասնության բացակայությունը չպետք է խոչընդոտի հաղորդմանը, ինչպես նաև խանգարի ՀՍ կամ հետաքննության համար իրավասու որևէ այլ մարմնի հետաքննել կասկածելի Սխալ անելու մասին հաղորդումները:
6.10 Այս քաղաքականության IX բաժնում նախատեսված պաշտպանությունները կիրառելի են այն անձանց նկատմամբ, որոնք տրամադրում են տեղեկատվություն կասկածելի Սխալ Արարքի վերաբերյալ: Անանուն հաղորդումների ներկայացումը հեշտացնելու նպատակով հասանելի կլինի անանուն հաղորդումներ ստանալու և արձագանքելու համակարգ:
6.11 Այն անձինք, որոնք մտադիր են հաղորդել կասկածելի Սխալ արարքի մասին և անորոշ են հաղորդման կանոնների կամ սույն Կարգով ընդգրկված որևէ հարցի վերաբերյալ, կարող են գաղտնի խորհրդատվություն ստանալ ՀՍ-ից:
6.12 Կասկածելի Սխալ Արարքի մասին հաղորդումները պետք է դիտարկվեն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի համապատասխան քաղաքականությունների և չափանիշների համաձայն:
6.13 Այն դեպքերում, երբ հաղորդումները չեն համապատասխանում ՀՍ-ի իրավասությանը, ՀՍ-ը կարող է ուղղորդել այդ անձանց համապատասխան մարմիններ:

VII. Վրեժխնդրության հաղորդում և հետաքննություն

7.1 Ցանկացած Ազդարար, որը կարծում է, որ կարող է ենթարկվել կամ ենթարկվել է վրեժխնդրության՝ կասկածելի Սխալ Աարքի մասին հաղորդելու կամ ՀՍ հետաքննությանը համագործակցելու արդյունքում, պետք է այս խնդիրն ի գիտություն ներկայացնի ՀՍ-ին՝ օգտագործելով 6.5 կետում նշված կապի միջոցները:
7.2 Վրեժխնդրության հաղորդման և հետաքննության ընթացակարգերը համապատասխանում են այս քաղաքականության VI բաժնում նախատեսված կանոններին և ընթացակարգերին:
7.3 Այն դեպքերում, երբ Ազդարարը, որը հանդիսանում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի

անձնակազմի անդամ, ներկայացնում է վրեժխնդրության առաջին հայացքից հիմնավոր դեպք, հիմնավորելով, որ իր հաղորդումը կամ հետաքննությանը համագործակցությունը նպաստել է վնասակար գործողության կամ որոշման կայացմանը, բանկը պարտավոր է ապացուցել, որ այդ գործողությունը կամ որոշումը հնարավոր կլիներ առանց հաղորդման կամ համագործակցության:

7.4 Վրեժխնդրության դեպքերը գնահատելիս ՀՍ-ը կամ համապատասխան այլ մարմինը պետք է հաշվի առնի հետևյալը.

ա) Ազդարարը հիմնավոր կերպով ապացուցել է, որ իր հաղորդումը կամ համագործակցությունը նպաստել են Սխալ արարքին կամ սպառնալիքին,

բ) Վրեժխնդրության մեջ մեղադրվող կողմը պետք է ապացուցի, որ այդ գործողությունը կձեռնարկվեր նույնիսկ հաղորդման կամ համագործակցության բացակայության դեպքում:

VIII. Հետաքննությունների հետ համագործակցություն

8.1 Բոլոր Պաշտպանված Անձիք պարտավոր են համագործակցել՝ տրամադրելով տեղեկատվություն, ապացույցներ կամ վկայություն՝ ենթադրյալ Սխալ արարքներին հետաքննության ժամանակ: Չհամագործակցելը կարող է հանգեցնել կարգապահական միջոցների, որոնք նախատեսված են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ներքին քաղաքականություններով և ուղեցույցներով:

8.2 Համաձայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի սկզբունաների և քաղաքականությունների՝ Կատարող Կազմակերպություններն և Ենթակապալառուները պարտավոր են լիարժեք համագործակցել Բանկի հետ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող որևէ հետաքննության հետ կապված, որն առնչվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործունեությանը վերաբերող կասկածելի Արգելված Արարաքների վերաբերյալ հաղորդումներին: Կատարող Կազմակերպությունները և Ենթակապալառուները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ նման հետաքննությանը ենթակա անձանց և կառույցների լիարժեք համագործակցությունը ապահովելու համար, տրամադրեն բոլոր համապատասխան տվյալները, և թույլ տան, որպեսզի Բանկը ստուգի նրանց հաշիվները, գրառումները և փաստաթղթերը:

8.3 ՀՍ-ը կարող է նաև խնդրել, որ այլ անձինք, որոնք չեն հանդիսանում Կազմակերպության Անձնակազմի ներկայացուցիչներ, համագործակցեն որպես Վկաներ:

8.4 ՀՍ-ի հետաքննությունների բոլոր Վկաները պետք է համագործակցեն բարեխղճորեն և տրամադրեն տեղեկատվություն կամ ապացույցներ, որոնք, նրանց համոզմամբ, ճշմարիտ են:

IX. Ազդարար պաշտպանություն և փոխհատուցում

Անանունություն և գաղտնիություն

9.1 Ցանկացած անձ կարող է ներկայացնել կասկածելի Սխալ Արարքի մասին անանուն հաղորդում: Ազդարարները կարող են պահանջել իրենց ինքնության գաղտնիության պահպանում, նրանց մերձավոր ընտանիքի անդամ(ներ)ի կամ ընկեր(ներ)ի ինքնության և հետաքննության ընթացքում կամ դրանից հետո փոխանցված տեղեկությունների վերաբերյալ: ՀՍ-ը կհարգի գաղտնիության պահանջները՝ հնարավորինս ապահովելով հետաքննության օրինական պահանջները:

9.2 ՀՍ-ը, համաձայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի քաղաքականությունների և ընթացակարգերի, կպաշտպանի Ազդարարների և վկաների ինքնությունը և գաղտնի տեղեկատվությունը ոչ լիազորված բացահայտումից՝ կիրառելով ֆիզիկական, էլեկտրոնային և ընթացակարգային վերահսկողության բոլոր հասանելի միջոցները:

9.3 ՀՍ-ը հետաքննության ընթացքում կձեռնարկի համապատասխան միջոցներ հետաքննությանն առնչվող ցանկացած ոչ հրապարակային տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու և հետաքննության արդյունքների չարտոնված բացահայտումը կանխելու համար:

9.4 Այն դեպքերում, երբ գաղտնի տեղեկատվության բացահայտումը, որը նշված է 9.2 և 9.3 կետերում, անհրաժեշտ է հետաքննությունը շարունակելու համար, ՀՍ-ը պետք է ստանա Ազդարարների, վկաների կամ այլ համապատասխան կողմերի բացահայտ համաձայնությունը:

9.5 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն կարող է բացահայտել գաղտնի տեղեկատվությունը բացառիկ հանգամանքներում, երբ դա պահանջվում է դատական ընթացակարգերի, իրավական պարտավորությունների կամ կեղծ և չարամիտ հաղորդումների պատժամիջոցների կիրառման նպատակով: Նման իրավիճակներում Բանկը, նախքան բացահայտումը, 9.2 և 9.3 կետերով պաշտպանված Ազդարարներին և վկաներին, կտեղեկացնի բացահայտման անհրաժեշտության մասին:

9.6 ՀՍ-ն ունի բացառիկ հասանելիություն հետաքննության նյութերին և իրավունք՝ որոշելու, թե արդյոք այդ նյութերը կարող են տրամադրվել այլ անձանց: Համապատասխանության ստորաբաժանման լիազորված աշխատակիցներին, որոնք շահերի բախում ունեն հետաքննության հետ կապված, կամ որոնք հրաժարվել են մասնակցել դրան, հետաքննության մասին որևէ տեղեկատվություն հասանելի չի լինի :

9.7 Հետաքննությանը ներգրավված ՀՍ անձնակազմը պարտավոր է պահպանել հետաքննության հետ կապված տեղեկատվության գաղտնիությունը, ներառյալ հետաքննության սուբյեկտների, վկաների կամ այլ շահագրգիռ կողմերի ինքնությունը:

9.8 Ազդարարները պետք է տեղեկացվեն ՀՍ-ի կողմից կատարված վերանայման կամ հետաքննության արդյունքների մասին: Հաղորդվող տեղեկատվության ծավալը կարգավորվում է Բանկի տեղեկատվության բացահայտման քաղաքականության կանոններով:

Պաշտպանված անձանց պաշտպանական և իրավական պաշտպանության միջոցներ

9.9 Ազդարար ներկայացնողները ու վկաները կարող են պահանջել միջանկյալ պաշտպանություն իրենց անվտանգության և բարեկեցության ապահովման համար ստուգումից կամ հետաքննությունից առաջ, ընթացքում և հետո:

9.10 Եթե հիմնավոր մտավախություն կա, որ Պաշտպանվցած անձը, որը հավարվում է Ազդարար կամ վկա կամ նրա մերձավոր ազգականը(ներ)ը կամ զուգընկեր(ները), կարող է տուժել Վրեժխնդրությունից, ՀՍ-ը պետք է առաջարկի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի տնօրենին ձեռնարկել համապատասխան պաշտպանության միջոցառումներ՝ ապահովելու Պաշտպանված անձի, նրա մերձավոր ընտանիքի անդամների կամ գործընկեր(ների) անձնական անվտանգությունն ու բարեկեցությունը:

9.11 Վրեժխնդրության հաստատման դեպքում՝ ՀՍ-ը կարող է առաջարկել փոխհատուցման միջոցառումներ՝ ներառյալ վնասակար գործողությունների դադարեցումը կամ պայմանագրի վերականգնումը:

9.12 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն պարտավոր է ապահովել, որ 9.9 և 9.10 կետերով սահմանված պաշտպանական միջոցառումները իրականացվեն առանց ուշացման:

Պաշտպանություն և փոխհատուցում արտաքին ազդարար և վկաների համար

9.13 Արտաքին Ազդարարները ու վկաները իրավունք ունեն պաշտպանվելու վրեժխնդրությունից:

9.14 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն պետք է ձգտի ապահովել, որ արտաքին ազդարարները և վկաները պաշտպանված լինեն Պաշտպանված անձանց կողմից հնարավոր վրեժխնդրությունից: Արտաքին Ազդարարների կամ վկաների նկատմամբ վրեժխնդրության դեպքում պատասխանատուները կարող են ենթարկվել ուղղիչ կամ կարգապահական միջոցների կամ տույժերի:

9.15 Վրեժխնդրության դեպքում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն կձգտի ապահովել համապատասխան պաշտպանություն:

9.16 Վրեժխնդրության հաստատման դեպքում ՀՍ-ը կարող է առաջարկել փոխհատուցման միջոցներ, որոնք պետք է իրականացվեն առանց ուշացման:

X. Արտաքին հաղորդում

10.1 Վրեժխնդրությունից պաշտպանության միջոցները կտարածվեն այն Պաշտպանված անձի վրա, որոնք կասկածելի Սխալ Արարքի մասին հաղորդում են ներկայացնում արտաքին մարմիններին ներքին մեխանիզմներից դուրս, և եթե տվյալ անձը կարողանա հիմնավորել, որ.

ա) Այդպիսի հաղորդումը անհրաժեշտ է խուսափելու՝
i. Հանրային առողջության և անվտանգության լուրջ սպառնալիքից;
ii. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործունեությանը պատճառած էական վնասից;
iii. Ազգային կամ միջազգային օրենքի խախտումներից;

բ) Ներքին մեխանիզմները համարվում են ոչ բավարար՝ հետևյալ պատճառներով.
i. Անձը հիմնավոր կերպով համոզված է, որ կասկածելի Սխալ Արարքի մասին ներքին մեխանիզմների միջոցով հաղորդելը կհանգեցնի վրեժխնդրության;
ii. Հնարավոր է, որ ապացույցները թաքցվեն կամ ոչնչացվեն;
iii. Ներքին մեխանիզմներով ներկայացված հաղորդման վերաբերյալ վեց ամսվա ընթացքում որևէ գրավոր պատասխան չի ստացվել:
գ) Պաշտպանված անձը չի ընդունում որևէ վճար կամ այլ արտոնություն հաղորդման համար:

10.2 Այն արտաքին հաղորդումները, որոնք կատարվել են սույն ընթացակարգի 10.1 կետի համաձայն և համահունչ են երրորդ կողմերի նկատմամբ առկա գաղտնիության պահպանման պարտավորություններին, չեն դիտարկվի որպես «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի քաղաքականություններով և ուղեցույցներով սահմանված տեղեկությունների բացահայտման պարտավորությունների խախտում:

XI. Գործընթացային երաշխիքներ

11.1 Ազդարարների, վկաների և հետաքննության ենթակա անձանց պաշտպանությունը կպահպանվի հետևյալ սկզբունքներով՝
ա) Կասկածելի սխալ արարքի վերաբերյալ հաղորդման մեջ ներգրավված ցանկացած անձ կամ կազմակերպություն պետք է տեղեկացվի իրենց դեմ ներկայացված հաղորդման մասին ողջամիտ ժամկետում, պայմանով, որ այդ ծանուցումը չի խոչընդոտի կասկածելի սխալ գործողության հետաքննության ընթացքին: Կասկածելի Սխալ Արարքի մասին հաղորդմամբ ներգրավված անձինք պետք է տեղեկացվեն ժամանակին, եթե դա չի խանգարում հետաքննության ընթացքին;
բ) Կասկածելի Սխալ Արարքի վերաբերյալ որոշումներ չեն կայացվի, եթե ներգրավված անձինք հնարավորություն չունենան պատասխանելու:

11.2 Անձնակազմի կարգապահական միջոցների և վերանայման ընթացակարգերը պետք է համապատասխանեն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի իրավական շրջանակին:

XII. Հաղորդակցություն, կարողությունների բարձրացում և համագործակցություն

12.1 ՀՍ-ը ակտիվորեն կտեղեկացնի և կհաղորդի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի սույն և այլ բարեվարքության քաղաքականությունների և ընթացակարգերի մասին՝ բոլոր հասանելի միջոցներով: Այն պետք է ապահովի, որ կասկածելի Սխալ արարքների մասին զեկուցելու ուղիները լայն հասանելիություն ունենան

12.2 Քաղաքականության արդյունավետ իրականացման համար ՀՍ-ը կիրականացնի վերապատրաստում ազնվության հարցերի վերաբերյալ՝ համակարգելով և համագործակցելով ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ի համապատասխան ստորաբաժանումների, իրականացնող կազմակերպությունների, ենթակապալառուների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

XIII. Ընթացակարգի համապատասխանություն, մոնիթորինգ, հաշվետվություն և վերանայում

13.1 Համապատասխանության ստորաբաժանումը պատասխանատու է սույն ընթացակարգի իրականացման համար: ՀՍ պետք է համագործակցի այլ ստորաբաժանումների հետ՝ խորհրդատվությիուն տալու և Գործընթացի արդյունավետ իրականացումը ապահովելու համար: Պետք է ապահովվի նաև, որ Կատարող կազմակերպությունները և Ենթակապալառուները ունենան ազդարարների և վկաների պաշտպանության արդյունավետ քաղաքականություն և մեխանիզմներ, և որ վերոնշյալ պարտավորությունները, ինչպես նաև այլ համապատասխան պարտավորություններ, ներառվեն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և Կատարող կազմակերպության կամ ենթակապալառուների միջև կնքվող պայմանագրերում:

13.2 ՀՍ-ը տարեկան հաշվետվություն կներկայացնի Տնօրինությանը՝ նախապես տեղեկացնելով Գործադիր Տնօրենին: Նախքան դա անելը, ՀՍ հաշվետվությունը պետք է ուղարկի Գործադիր տնօրենի քննարկմանը, որը կարող է ներկայացնել մեկնաբանություններ ՀՍ և Տնօրինության կողմից քննարկման համար:

13.3 ՀՍ-ը պետք է պարբերաբար հրապարակային հաշվետվություններ ներկայացնի սույն ընթացակարգի իրականացման վերաբերյալ: ՀՍ-ը պետք է պահպանի և հրապարակայնորեն բացահայտի ենթադրյալ սխալ արարքների մասին հաշվետվությունների գրանցամատյան՝ սույն ընթացակարգի սահմաններում և համաձայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի տեղեկատվության հրապարակման քաղաքականություններին և չափանիշներին:

13.4 ՀՍ-ը կվերահսկի և կվերանայի քաղաքականության իրականացումը և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին գործունեությանը առնչվող ազդարարների և վկաների պաշտպանության

արդյունավետությունը՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ: Նման մոնիթորինգային գործողությունները և վերանայումները կարող են ներառել հանրային խորհրդակցություններ:

XIV. Գործողության սկիզբ

14.1 Քաղաքականությունը ուժի մեջ կմտնի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Տնօրինության հաստատումից հետո: